


Եթէ երկինքին վրայ կապոյտի, ճառագայթի, ստուերի եւ ամպի կիտածումը չտեսնուէր, սեփ սեւ դաշտանկար մը պիտի նշմարուէր. աչքը, տեսութիւնը նեղող լուսաստուերի մը մէջ կ'ընկղմի. ցախաստանը մութ է. եւ ծովերէն անդին, մշուշին մէջ կ'ընդհատուի Հէքլան, որ հորիզոնին վրայ դժոխքի օդահանի մը պէս կը մխայ: Կռուանոցին դատաւոր լորդ Քէյն, վէս ընտանիքի մը որդի, իրեն մօտ ունէր երկու զինուորական ազդարարներ: Սարաւանդակը արջի եւ ասուեղ հիւսսեղջերուի մորթերով ծածկուած է: Կախարդներու ցայգածողովին սարսափ ազդող չոր դիւահաններ կարգապահութեան կը հսկեն, ինչպէս կը վայելէ կռիւի մը մէջ. քահանայ մը պատարագ կը մատուցանէ եւ մեղեդի մը կ'երգուի:

(Շարունակելի)

ՄԽԻԹՍՐ ՊՈՆՏԱՅԻ



ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՔ

ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆԻՆ ԴԱԴՐԱԾ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ

Նախարան. — Ա. Կարծեցեալ գիւտ Նոյեան տապանի Մասիսի գագաթը. — Բ. Տապանն անտարակոյս Հայոց լերանց վրայ իջած դադրած է՝ Կորդուաց աշխարհին մէջ. — Գ. Տապանակիր լեռն՝ ըստ ազգային հնագոյն աւանդութեան՝ Կորդուաց գաւառին Սարարադն է. — Դ. Այլեւայլ կարծիք յօտարազգի պատմագրաց եւ ի բեւեռագրութեանց սոյն խնդրոյն վրայ. — Ե. Վերջաբան:

Գուցէ ուսումնասէր ընթերցողներէն ոմանք՝ յօդուածիս վերնագիւրըն աչքէ անցուցած ժամանակնին, ափ յափոյ պատասխանեն թէ անտարակոյս Մասիս լերան վրայ հանդչած դադրած է Նոյ նահապետին տապանն: — Եւ սակայն բո՛ւն իսկ այս ընդհանրացեալ ծուռ գաղափարն է՝ զոր պիտի ջանանք ուղղել ներկայ էջերուն մէջ, հետզհետէ ցուցընելով թէ ինչպէս որ անհերքելի ճշմարտութիւն մ'է Նոյեան տապանին Հայոց աշխարհին լեռանց վրայ դադարած ըլլալը՝ նոյնպէս ալ ստոյգ եւ հաւաստի է թէ Մասեաց կամ (պիտակաբար գործածուած) Արարատ լերան վրայ իջած չէ՝:

Կը խնդրենք միայն որ վերծանողք մտադիր անկողմնասիրութեամբ կարգան սոյն տողերը, մէկդի դնելով ո՛ր եւ է նախապաշարունմ ու կանխակալ կարծիք. եւ լաւ յիշեն այն առածն որ կ'ըսէ՝ թէ ճշմարտութիւնը մարդուս համար ամէն բանէ աւելի սիրելի ու պատուական պէտք է ըլլայ. «ընդունելի ե ինձ, եւ սիրեմ զնեփիսե... քայց սակայն սի-

«րուն եւ պատշաճական ե քան զարեւելան ինչ ճշմարտութիւնն» (Եւս. Պատմ. Եկ. Է. գլ. 23 էջ 569. Վենետիկ 1877) :

Ա.

Խնդիրն ըստ ամէն տեսակէտի քննասիրելու համար, հարկ կը հաւ
մարինք հոս 'ի սկզբան շեղում մ'ընելով՝ պատմել Նոյեան տապանին
գիւտին զրոյցը, զոր տասը տարի առաջ հրատարակեցին Եւրոպական
լրագիրներն : Ականատես ճանապարհորդին անունն էր Յովսէփ Նուրի՝
վարդապետ աստուածաբանութեան ու կանոնական իրաւանց եւ արքի-
դիակոն Բաբիլոնի . հետեւեալ տեղեկութիւններն ու հետաքրքրաշարժ
մանրամասնութիւնքը կը թարգմանենք Փարիզու Տիեզերք (Univers) օրա-
գրին 1892 սեպտեմբեր 28 թիւէն, զորոնք նոյն թերթն առանց երաշ-
խաւորելու՝ վերապահամբ 'ի լոյս ընծայած էր, քաղելով հանելով ա-
մերիկեան New-York Herald լրագրին յիշեալ տարւան յուլիս 13 թիւէն .
իսկ այս վերջինս առած էր զայն՝ San Francisco Examiner նոյնպէս
Ամերիկայի թերթէ մը : — «Տակաւին իմ ըրած գիւտիս մասին՝ լրա-
«գրաց մէջ բան մը գրած չեմ . միայն Հնդկաստանի մէջ քանի մը հոգւոյ
«հաղորդած եմ զայն . որովհետեւ մարդիկ առհասարակ զիս ծաղր կ'ը-
«նէին եւ պատմածներուս հաւատք ընծայել չէին ուղեր . . . : Արդ վեր-
«ջապէս ապրիլ 25ին (1892) կէսօրէն 2 ժամ ետքը կարող եղայ Արարատայ
«գագաթան վրայ տեսնել աչօքս Տապանն . ինծի ընկերակից էին Գահ-
«րաման, Ակիւսթին եւ Ահանոս քրիստոնեայ Ասորեստանեայք . . . շատ
«ծանրագնաց ուղեւորութենէ եւ դժուարատու ճիգերէ յետոյ՝ հասանք
«կոնաձեւ գագաթան մօտերն, որուն բարձրութիւնն 5,000 մետրէ աւելի
«է : Թէպէտ յառաջագոյն մարտ ամսոյ մէջ ուրիշ կողմէ վեր ելնելու
«փորձ փորձած էինք, սակայն չյաջողելով այն՝ ստիպուեցանք վար իջ-
«նելու : Ապրիլի վերջերը մասամբ ձիւներն հալած ըլլալով՝ կը քալէինք
«երկայն գաւազաններ բռնած ձեռքերնիս, որ Քիւրտիստանի շատ կար-
«ծըր փայտի տեսակէ մը շինուած էին . . . ես ամենուն առջեւէն կ'եր-
«թայի՝ արեւելեան-հիւսիսային ուղղութեամբ, եւ գրեթէ 4,000 մետր
«բարձրութեան հասած էի . իսկ իմ ընկերներս 300 մետրէ աւելի ետեւ
«մնացած էին ինծմէ . արդ ես անոնցմէ 300 մետրի չափ աւելի վեր
«ելնելով, իբր նոյնչափ մետր ալ կը պակսէր տակաւին՝ մինչեւ գա-
«գաթը ժամանելու համար : Այն ատեն էր որ՝ առանց հեռագիտակի
«պարզ աչօք նշմարեցի լեռան ծայրը մասնաւոր գոյն մը, որ բնաւ չէր
«նմաներ ձիւնին սպիտակութեանը : Սոյն տարօրինակ երեւոյթը խորին
«տպաւորութիւն մը գործած ըլլալով իմ վրաս, մէկէն ձեռքս առի փոք-
«րիկ դիտակս . եւ 60-70 մետր եւս դէպ 'ի հիւսիս առաջ երթալով՝ իմ
բոլոր բովանդակ ուշ եւ ուրուշս այն սեաւ բծին վրայ դարձուցի : Իս-

«կոյն իմացայ՝ որ (նոյեան) տապանին դիմացն եմ եղեր, որուն մէկ
«մասը թէպէտ ձիւնապատ՝ բայց շատ յստակ կը տեսնուէր. վերոյիշեալ
«գագաթան չորս կողմը դառնալով՝ տապանին ամբողջ մեծութիւնը դի-
«տեսցի. երկայնութիւնն էր 300 ռսֆ (= 99 մետր), եւ բարձրութիւնը 100
«ռսֆ (1) (= 33 մետր): Նաւուն մէջտեղը աշտարակաձեւ փոքրիկ բան մը
«կար, եւ կողերուն վրայ ալ տեսնուէին պատուհաններ (2): Թէպէտ տա-
«պանին ծածքը միջավայրին վրայ ձիւնին ծանրութենէն ճնշեալ էր,
«սակայն նոյնին հետքն ու նշմարանքը կը տեսնուէր երկու ծայրերուն
«կողմերը: Օղը շատ պայծառ էր, եւ արեգական ճառագայթներն իսկ
«ջերմային ըլլալով՝ ձիւնն առ փոքր փոքր տեղի կուտար մեր ոտից
«ներքեւ. այնու հանդերձ սոյն բարձրաբերձ բարձանց վրայ սաստիկ կը-
«ծուօղ մը կ'ընէր, եւ ամենքնիս ալ շատ ցուրտ կը զգայինք... Լե-
«րան ծայրին ամբողջ շրջանն ընելով՝ տապանն իւր ամէն կերպարանաց
«ներքեւ նկատեցի. ո՛չ մշուշ կար եւ ո՛չ ալ ամպ պատած էր գագաթը.
«մթնոլորտը պայծառ ու վճիտ ըլլալով՝ անհնարին էր զգայարանաց
«խարեպատիր պատրանքը»։ — Մինչեւ հոս յիշեալ Փարիզեան թերթին
գրածն է։

Չենք ուզեր մի առ մի հերքել այս առասպելապատում գրուածքը.
միայն թէ անմեկնելի եւ զարմանալի բան է՝ որ այնչափ հռչակաւոր
ուղեւորք մանաւանդ ժ.թ. դարուն մէջ մինչեւ Մասեաց գագաթն ելած
եւ իրենց ուղեգնացութեան մանրամասն նկարագրութիւնն ըրած ատեն-
նին, անոնցմէ եւ ո՛չ մին տեսած կամ նշմարած չըլլայ նոյն լեռան
ծայրը կեցած 300 ռսֆ երկայնութեամբ ու 100 ռսֆ բարձրութեամբ նոյ-
եան տապանն. ուստի իրաւամբք կ'ըսեմք թէ, ո՛րք կարի եւ առասպելք։

(Շարունակելի)

Յ. Վ. Մ.

(1) Այս չափերը բնաւ չեն համաձայնիր Սբ. Գրոց աւանդածնե-
րուն. այսպէս կը կարգանք Ծննդոց մէջ (2, 15), «արասցես զտապանն.
«յերեմիարիւր կանգնոյ զերկայնութիւն տապանին, եւ 'ի յիսուն կանգնոյ
զայնութիւնն, եւ յերեսուն կանգնոյ զբարձրութիւնն»։ — Արդ հին կան-
գունն արդի չափերու վերածելով՝ կ'ունենանք գրեթէ 156 մետր երկայ-
նութիւն, 26՝ լայնութիւն եւ 15 բարձրութիւն. որ է ըսել թէ՝ նոյն
կարուցած տապանը շատ աւելի մեծ էր քան այսօրուան օրս առհասարակ
շոգենաւերն իսկ։ (Ծան. հայ թրգմնչին)։

(2) Ծննդոց մէջ ընդհակառակն մէկ պատուհանի միայն խօսք կ'ըլ-
լայ. «եբաց նոյ զպատուհան տապանին զոր արար» (Ը, 6)։ Մեկնիչք Սբ.
Գրոց բազմաթիւ պատուհաններ չեն ընդունիր։
(Ծան. հայ թրգմնչին)։